

Գրիգոր սքանչանուն, հոգի իմաստուն,
 դու շնորհաց (է)իր տուն:
 Սուրբ Մովսէս, Գրիգոր,
 ձեր որդիք մօլոր աղերսեն յորդոր...

Մովսէս հոգեւոր Հայոց,
 Գրիգոր պարծանք իմաստնոց...
 Երկու արեգակը լուսոյ
 ծագեցան ի յաշխարհս հողոյ.
 Մթխացեալ ազգս Հայոց
 ուղղեցին առ Տէրն ամենոյ:
 Մովսէս արեւելք տեղոյ
 փարատեաց խաւար ի հողոյ.
 Կամօք մօլորեալքն դոլոյ,
 որք ծառայքն էին բանսարկոյ:
 Նստաւ դիտապետ հոյոյ,
 փոխեցաւ առ Տէրն միայնոյ.
 Բաղում յիշատակ դոլոյ,
 զոր սընոյց ինքըն կենդանոյ:
 Գլուխ եղ ի տեղ դիտոյ,
 անմարմինըն դոլ ի մարմնոյ.
 Ազգամամբ հոգւոյն ընտրելոյ,
 խնդրեցին սուրբն դէտ հոգւոյ:
 Զարժանաժառանգ յարդոյ,
 սուրբ սրտիւ մաքուր խորհրդոյ:
 Նըստուցին յաթոռ պատուոյ
 Բարդուղիմէ սուրբ առաքելոյ.
 Այլ եւ նման Թաթէոյ
 իւր շնորհեալ սուրբ չառաւիղոյ.
 Սուրբըն Փիլիպպոս դոլոյ,
 ոչ թըւի փոխին Մովսէսոյ: